

# ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

## ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ.

Օրով քաղաքում կազմուել է եկեղեցական — հնագիտական մի յանձնաժողով: Ընկերութեան նպատակն է ուսումնասիրել յատկապէս Օրովի թեմի եկեղեցական հնութիւնները, պահպանել, որչափ հնար է, աւերմունքից և կորստից, երեան հանել նորերը, տալով նոցա նկարագրութիւնները, ուսումնասիրել տեղական զանազան եկեղեցական ծէսերն ու արարողութիւնները ևն.։ Առ այժմ յանձնաժողովի գլխաւոր նպատակն է կազմել Օրովի թեմի բոլոր վանքերի, եկեղեցիների, ծխականների նիստ ու կացի տեղադիրը, Յանձնաժողովն ունի իւր առանձին եկեղեցական — հնագիտական թանգարանը, որ բացուել է տեղական առաջնորդարանում:

— Ռուսաց քարոզչական ընկերութիւնների տարեկան տեղեկագիրը ի միջի այլոց մատնացոյց է անում, թէ որպիսի եռանդ և զոհաբերութիւն են յանձն առնում միտինարները հեռու անկիւններում այլազան ցեղերին քրիստոնէյ դարձնելու համար: Նախուրի շրջանում, այդ շրջուն քարոզիչներից մէկը, անցելով տարուայ ընթացքում ոտքով շրջել է 1300 վ. տարածութիւն, մեծ մասամբ անմարդաբնակ, օրական մինչև 60 վ. ճանապարհ կտրելով որ և է ծխականատարութեան համար, գիշերելով բաց երկնքի տակ, անտանելի ցրտերի և բութ մէջ, շատ անգամ անանցանելի ծինապատ խորութիւններ ձեղքելով: Մի ուրիշը, որ քարոզում էր եակուտներին և թունգուզներին 1270 վ. է անցել ծինապատ անապատներով, քարոզչին միայն վիճակուած նեղութիւններ յանձն առնելով: Մի երրորդը 99 թ. 31/2 հազար վ. աւելի է կտրել սառցային աշխարհի մոռացուած անկիւններում և ինքնազոհութեան գնով այլասեռ ժողովրդի բոլորտներին պահպանել: Այդ չորջուռն քարոզիչներից մէկը իւր ճանապարհորդութեան համար գրում է, «նորադարձների պահպանութիւնը, ծխական արարողութիւններն անթերի կատարելը, հօտի միթիւրութիւնը ոչինչ արգելք չեն ճանաչում. քարոզիչը ամեն բոլոր պատրաստ է անմարդաբնակ, փոքրիկ կամաններից իսկ զուրկ սառցային անապատներով առաջ գնալ որ և է Նախուրի տայգայում» պահանջուած քրիստոնէական օգնութիւն ու սէր բաշխելու: Թէևս գրում է նա, սովորական է դարձած ասել, որ մենք ճանապարհորդում ենք երբեմն ոչ — ոտքով, բայց դա միայն անուամբ է. օրական տանեակ վերստեր անցնել այդ անտանելի տեղերով սովորական բան է մեզ համար. բայց այդ ճանապարհորդութիւնը նոյն իսկ ամանն [այլ ևս չեմ ա-

սում ձմեռուայ համար, երբ սալաութիւնի ցրտերին մարդ զգայնութիւնն իսկ կորցնում է] անտանելի է և բազմաթիւ ճախորդութիւնների հետ կապուած: — մանկների անհամար բազմութիւն, մի կատարեալ ամպի կտոր, ամեն կողմից շրջապատում են ճանրորդին և իւր դրաստը. մեր ուտելիքն ամբողջ ժամանակը՝ միայն չոր պաքսիմատ է, թէյ (եթէ այդ էլ կայ). քուր վերցնում ենք լճակներից, որ համարեա միշտ կասկածելի յատկութիւն ունին, անթիւ մեղակներով և մանր էակներով հարուստ. երբեմն գիշերում ենք եակուտների իւր տներում, նոցա հոտած և զագիր սենեակներում, որտեղ քնելու կամ հանգստանալու մասին մտածելը մեղք կլինէր, բոլորներն ենք հաշուում, թէ երբ այդ մքրած և անբարեհամբոյր որջից դուրս կգանք: Մեծ բազմաթիւութիւն է եթէ քարոզիչը ճանապարհորդէ ձիով, եղջերուներով, շներով կամ նաւակով:

— Նոյեմբ. 16-ին Պետերբուրգի քաղաքային խորհրդի դահլիճում գումարուել է տարրական դպրոցների աշխարհական և եկեղեցական կրօնուսուցչների առաջին ժողովը: Նարպի Նիկոն եպիսկոպոսի նախագահութեամբ, Այսպիսի ժողովներ նորութիւններ չեն Պետերբուրգի դպրոցների համար. դեռ ևս 1881 թ. ից Պոլխատով աւագերէքի նախագահութեամբ եղած երեք այդպիսի խորհրդակցութիւնների վիճակները դործադրուած էին դպրոցներում մինչև այժմ: Բնան տարի անցնելուց յետոյ՝ նորից ծագում է նոյն խնդրի կանոնադրութեան հարցը 95 կրօնուսուցչների խորհրդակցութեամբ, Նիկոն եպիսկոպոսը ժողովի բացման ճամբի մէջ յիշեց մետրոպոլիտի ցանկութիւնը այս ժողովի գումարման և խորհրդակցութեան մասին: Ապա նախագահը իւր կողմից անձնակոն փորձառութեան հիման վերայ բացատրեց ժողովի գումարման առիթն ու նպատակը: Տարրական դպրոցների մէջ կրօնի դասաւանդութեան զանազան եղանակներ են նկատուում, այդ տարբերութիւններից էլ բազմաթիւ տարակուսանքներ և դժուարութիւններ ծագում: Այդ տարակուսանքները վերացնելու, դասաւանդութեան միաձեւութիւն հաստատելու և ծրագրելը օգտակար կերպով գործադրելու համար կոչուած է ժողովը միջոցներ գտնելու և որոշելու: Կրօնի դասատուների պատրաստութեան մէջ ևս մեծ տարբերութիւններ կան. ոմանք ձեւաբանաւարտ են, ոմանք դպրանոցաւարտներ, ոմանք թերակատար դպրոցականներ, կան մինչև իսկ այնպիսի ուսուցիչներ, որ ոչ մի տեղ կանոնաւոր ուսումն չեն ստացել: Ժողովի գլխաւոր նպատակներից մէկը պիտի լինի այսպիսի բազմազան պատրաստութիւն ունեցող դասատուների մէջ մտքերի շփումն յառաջ բերել, որպէս զի անփորձներն ու անպատրաստները կատարելագոյնների օրինակին հետեւեն:

Առաջին ժողովը միայն նախապատրաստական խորհուրդ էր. հետևեալ ժողովներին համար ուսուցիչները տեղեկութիւններ պիտի հաւաքեն ընդհանրութեան մասեցիլ անելու համար:

— Պենյոնի հոգևոր դպրանոցին կից գոյութիւն ունի չքաւոր աշակերտներին օգնելու մի ընկերութիւն: Հաստատութեան կազմակերպելու պատճառը եղել են երկու ամուսիններ պ. և ա. Ներոնովները՝ միանգամայն 12000 ր. նուիրելով այդ նպատակին: 1899 թ. հաշուից երևում է, որ ընկերութիւնը բաղկացած է 4 պատուոյ, 9 մշտական և 116 իսկական անդամներից: Նոյն թուի մուտքը եղել է 1791 մ. 57 կ. և ծախս 1371 մ. 52 կ.: Զքաւոր աշակերտներին օգնում են հագուստ, կոշիկ և զբոսը մատակարարելով: Ընկերութեան դրամազուխը 7 տարուայ մէջ հասել է 15,429 մ. 11 կ.: ՀՀաշուելով տարեցտարի արած օգնութիւնները, Ուշադրութեան արժանի է յատկապէս մի կէտ. դասագրքեր մատակարարելուց զատ՝ ընկերութիւնը աշակերտական մատենադարան է կազմում, իւրաքանչիւր տարի հետզհետեւ ձօնացնելով այդ բարեխառակ հաստատութիւնը:

Ինչպէս օգտակար կլինէր նման հաստատութիւններ ունենալ մեր հոգևոր մարդկանցին համար:

— Մոսկուացի յայտնի բարերործ Բ. Ա. Բախրուշինը կարևոր նշանակութիւն ունեցող մի բարեգործութիւն է արել Մոսկուայի աղքատների համար, որ արժանի է բոլոր քրիստոնեաների ուշադրութեան: Մեծ քաղաքներում աղքատութիւնը աւելի անտանելի է, քան մեր երկրում երևակայել կարող ենք. աղքատների համար ամենից դժուար է մանաւանդ բնակարանի հարցը. Աղքատն անկարող է բնակարանի վարձ վճարել, իսկ ընտանիքը ցուրտ ձմեռը դուրսը փողոցում թողնել չի կարելի: Այսպիսի թշուառների համար Եւրոպայում հիմնում են մեծ հաստատութիւններ, ուր աղքատի ընտանիքը ձրի պատսպարուիլ կարող է եղանակի խտութիւններից: Վերոյիշեալ բարեգործը ընդարձակել է վաղուց իւր ընտանիքի խնամքը վայելող այդպիսի մի հաստատութիւն ընծայելով գարձեալ երկու մեծ շինութիւն 1750 քառ. սաճէն հողով և 200000 ր. դրամազխով: Բացի յիշեալ նուիրարարութիւնից՝ 50000 ր. էլ նշանակել է այդ հաստատութեան համար յատուկ եկեղեցի կառուցանելու համար: Խոստանալով հոգալ և եկեղեցուներքին զարդարանքները, Հին հաստատութեան վերայ վերոյիշեալ նուիրարարութեամբ աւելանում 150 սենեակ, 100 քայրի կանանց և իրենց երեխաների համար: Իսկ 50-ը այն աղջիկների համար, որ կրթւում են Մոսկուայի միջնակարգ կամ բարձրագոյն դպրոցներում: Այրիների որդոց համար նոյն հաստատութեան մէջ արհեստի և ձեռագործի դպրոցներ պիտի բացուին, որի համար տարեկան ծախս է նշանակուած 17500 ր.

— Նորիւր Մոսկուայում եկեղեցական հեղինակահան մի ընկերութիւն է հիմնուել: Այս ընկերութեան նպատակն է ուսումնասիրել և հրատարակել Մոսկուայի վանքերի և եկեղեցիների պատմութիւնները, եկեղեցական հին ծէսերը նախնի ձեռագրերի համեմատ, հին պատկերների նկարագրութիւններ և գիտնական աշխատութիւններ: Բացի գործնից ընկերութիւնը պէտք է ստուգութեան նշանակէ գործարաններում պատրաստուած սրբոց պատկերները և պիտի ձգտէ բարձրացնել ընդհանրապէս եկեղեցական արուեստը, որ պատշաճաւորութեան աստիճանից շատ ցած է վերջին ժամանակների անփութութեան պատճառով:

Այս լուրը յիշեցնում է և մեր եկեղեցու անմխիթար վիճակը պատկերների և զարդ ու զարդարանքի կողմից: Աստուածարանական գիտութեան հետ մեր եկեղեցու զոյութեան անհրաժեշտ պայմաններից մէկն է և՛ եկեղեցական արուեստի երգեցողութեան և պատկերագրութեան՝ բարգաւաճումը:

— Հոկտեմբերի վերջերից Պետերբուրգում Հոգևոր ձեմարանի ինսպեկտորի նախագահութեամբ սկսուած են մի շարք դասախօսութիւններ այլ և այլ անձանց կողմից կրթւած դասի համար՝ քրիստոնէական բարոյականութեան մասին: Ռուսաստանում ևս հետզհետեւ հասունանում է այն գաղափարը, թէ քրիստոնէութիւնը պէտք է քարոզել նաև եկեղեցուց դուրս: դասախօսութիւններով տպագրուած անտրակներով կէն, Իսկ մեր եկեղեցիներում հասարակ քարոզներ անգամ չեն խօսում, ուր մնաց դասախօսութիւններ կատարուին: Քարոզելու համար սակայն պէտք է նիւթ և գաղափար ունենալ, ապա ուրեմն մինչև որ քրիստոնէական գիտութիւններով փոքր ի շատե՛ օժտուած մարդկանց քահանայութեան չկոչենք, ի զուր է այդ մասին երազել: Հռոմէք բաղում են և մշակք սակաւ, արդ աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւրս:

— Հոկտ. 15-ին Պորէլի գիւղում Վաղիմիր Մետրոպոլիտն օծել է աղքատանոցի համար շինուած եկեղեցին: ապա նոյնտեղը հաստատուած աղքատանոցն ու ասպնջանոցը: Այս հաստատութիւնների հիմնադիրն ու խնամակալուհին Մեղ-վեդնիկովան է, որ իւր ամբողջ կալուածը շինութիւններով, անտառներով, 300 գետնատին տարածութեամբ, գթութեան գործին է նուիրել: աւելացնելով և 400000-ի մի գումար նորա պահպանութեան համար: Բացի այս նուիրարարութիւնից իւր կտակի մէջ խոստանում է թողնել զարձեալ 300000 ր. վախճանով, որ իւր հաստատութիւններն իրենց եկամուտներով կ'ոճուարանան կառավարուիլ: Ահա այս կալուածների վերայ է շինուել վերոյիշեալ եկեղեցին և աղքատանոցը ամեն կարգի չը.

քաղաքների համար, իսկ առանձին ապաստանարան էլ հիմնել է ծերացած և այլ ևս գործելու անընդունակ հոգևորականների համար:

— Օրինակելի են Երասխայի թեմի Բոստով գաւառի Վեսիկ գիւղի հաստատութիւնները: 1877 թ. գիւղացիք Կեկին վաճառականի օժանդակութեամբ քարուկրեայ գեղեցիկ մի դպրոց կանգնեցին 60 հոգու համար 5500 ռ. արժողութեամբ: Դրպրոցի պահպանութեան համար նոյն վաճառականը կտակել էր 12500 ռ. իսկ գիւղացիք դպրոցին ընծայեցին մի գեանատին հող, քան երկու տարուանից ի վեր նոյն գիւղում աշխատում է հոգևոր կուլում ունեցող մի փորձառու վարժուհի և նորա շնորհիւ դպրոցի յարգը գիւղացիների աչքում այնքան բարձրացաւ որ այժմ այդ գիւղում բացի ծերունիներից չկայ ոչ ոք, որ գրել կարգալ չիմանայ: Նոյն ուսուցչուհուն յաջորդել է այժմ հաւասար եռանդով մի ուրիշ ուսուցիչ, որ տեղական թէչիկ և քահանայի հետ համոզել են գիւղացիներին եկեղեցուն և դպրոցին կից մատենադարան ընթերցարան բանալ, չէնց առաջին տարին կարողացան 300 հատոր գիրք ձեռք բերել: մատենադարանապետի պաշտօն կատարում է տեղական քահանան: Բաղդաւ օր գիւղ:

#### ԿԱԹՈՒԼԻԿ ԵՎԵՂԵՅԻ:

Վատիկանի և Ֆրանսիայի յարաբերութիւնները հետզհետեւ աւելի և աւելի լարուել են սկսում: Քանիցս առիթ ենք ունեցել մեր ընթերցողներին տեղեկութիւններ յայտնել Օտար եկեղեցիների բաժնում, բայց այժմ աւելի սուր կերպարանք է ստացել քան առաջ, և երկիւղ կայ որ այդ լարումը Ֆրանսիայի համար մեծ դժուարութիւններ յառաջ բերէ: Երրորդ հասարակապետութեան և Վատիկանի յարաբերութիւններն ընդհանրապէս այնպէս մտերմական չեն, ինչպէս եղել է առաջ Ֆրանսիայի և Վատիկանի մէջ: Ֆրանսիան կաթոլիկ երկրների մէջ միակն է, որին Հռոմի միշտ յարգանքով է վերաբերուել և համարել է նորան իւր նեցուկներից մէկը: Բայց երրորդ հասարակապետութիւնը նախկին բարեկամական յարաբերութիւնը խախտեց նորանով, որ պետական ուսումնարաններից վերացրեց կրօնի պարտաւորեցուցիչ ուսումը: Այդ կարողացումիւնը ոչ միայն կառավարութեան օգուտ չբերեց, այլ մեծ վնաս: Ֆրանսիայում զօրացած անբարոյականութիւնը մասամբ վերագրում է այդ հանգամանքին: առանց կրօնի և կրօնական կրթութեան ժողովրդի մեծամասնութիւնը անտարբեր է դառնում նաև դէպի կենդանի բարոյականութիւնը: Միւս կողմից հասարակապետութեան նոր օրէնքը խթան եղաւ կաթոլիկ հոգևորականութեան բազմացնելու և կա-

նոնաւորելու իւր մասնաւոր կաթոլիկ դպրոցները, ուր այժմ ուսանում են Ֆրանսիացիների մեծագոյն մասը: Այս իրողութիւնը յայտնում են ոչ միայն արտասահմանեան թերթերը, այլ Ֆրանսիացի իրենք: Գործնով հոգևորականութիւնը անկախ գործունէութեան աւելի մեծ շրջան ձեռք բերեց, և զօրացաւ նորա նիւթական և բարոյական ազդեցութիւնը ժողովրդի վերայ:

Այս անյաջող փորձից խրատուելու փոխարէն ինչպէս յայտնում է Ե. Բ. Թերթը, Վալդէկ Բուստի նախարարութիւնը կաճեցում է աւելի համարձակ քայլեր անել Վատիկանի դէմ, չմտածելով որ դորանից Ֆրանսիայում ներքին, մեծ երկպառակութիւններ կարող են յառաջ գալ: Պապն արդէն սպառնացել է, որ քրիստոնեաների պաշտպանութեան գործը արեւելքում և Զինաստանում կյանքն է մի ուրիշ պետութեան, եթէ Ֆրանսիան չփոխէ իւր ընթացքը կաթոլիկ հոգևորականութեան վերաբերութեամբ: Իսկ արեւելեան քրիստոնեաների պաշտպանութեան գործը Ֆրանսիայի համար քաղաքական ահագին նշանակութիւն ունի: դորանով իւր քաղաքան ազդեցութիւնը զօրացնելու և գործադրելու աւելի միջոց ունի արեւելքում, քան միւս պետութիւնները: Ֆրանսիայի համար արեւելեան քրիստոնեաների պաշտպանութեան գործը պատուոյ և հեղինակութեան մի հանգամանք է միանգամայն, որ միջին դարերից նուիրագործուել է պատմութեան մէջ, Խզել արեւելեան քրիստոնեաների հետ ունեցած բարեկամութիւնը, իւր դէմ զրգուել պապի իշխանութեան ենթարկուած արեւելքում գործող բազմաթիւ միաբանական կարգերը, որոնց օգնութեան կհասնեն անշուտ բուն Ֆրանսիայի կարգերն ու միաբանութիւններն իրենց դրամով և հոգևոր զինուորներով, արդարև մի փոսնդաւոր խաղ է Ֆրանսիայի ներկայ կառավարութեան համար, որ պէտք է լրջութեամբ ի նկատի ունենայ: Այս պատճառով էլ յիշեալ թերթը, որի սրտին մօտ է Ֆրանսիայի հեղինակութիւնն ու զօրութիւնը, որպէս Ռուսաց դաշնակից պետութիւն, խորհուրդ է առնում թողնել Ֆրանսիայի հոգևորականութեան դէմ սկսած սխալ և բռնի քաղաքականութիւնը, աշխատելով աւելի սերտ կապել կառավարութեան հետ եպիսկոպոսութիւնները, քանի որ ինքն է առաջարկում առաջնորդներին և պապը ձեռնադրում: Ապա առաջարկում է նրանց իշխանութեան ենթարկել Ֆրանսիայում կաթոլիկ միաբանութիւններն ու կարգերը, որոնց դէմ է լարուած իսկապէս կառավարութիւնը: Ֆրանսիայում եղած կաթոլիկ միաբանութիւններն իրենց բազմաթիւ դպրոցներով, բարեգործական հաստատութիւններով, քաղաքական թերթերով և ընկերութիւններով ներկայ կառավարութեան թշնամիների մէջ աննշան տեղ չեն բռնում:

ձիզույթների մասին. Սորոսի (Փարիզի համալսարանը) կաթոլիկ աստուածաբանութեան փակուած տը 1554 թ. ձիզույթներին Քրանսիա թողնելու դէմ հետեւեալն է յայտարարել. «Այս կարգը, որ մեծախօսութեամբ իրեն Յիսուսեան կարգ» անձառելի անունն է տալիս և յանդուգն կերպով ամեն տեսակ մարդիկ նոյն իսկ ստահակներին և յանցաւորներին առանց տարբերութիւն զնելու ընդունում է իւր միաբնութեան մէջ. . . որը անսահման արածութիւններ, թողութեան և խոտովանութեան և սրբազնագործութեան մէջ այնքան ազատութիւն է վայելում, տէր է քարոզական ամբիօնների և մատաղ սերնդի կրթութեան գործին, անարգելով համալսարանների (գիտութեան տեսակետով), եպիսկոպոսների, թագաւորների և աշխարհիկ անձանց իրաւունքները, այս միաբնութիւնը ակնյայտին կերպով արատաւորում է վանականութեան պատիւը, մէկ զի է դնում բարեպաշտութեան համար այնքան կարեւոր պահեցողութիւնն ու եկեղեցական ծէսերը, անհնադանդութիւն է սերմանում եպիսկոպոսների, աշխարհիկ և հոգեւոր իշխանութիւնների դէմ, շփոթութիւն է ձգում սոյն երկու դասակարգի մէջ, ժողովրդի մէջ տրտունջ, երկպառակութիւն, դատաստանական գանգատներ, նախանձ և ապստամբութիւն յարուցանում, Ուստի և հասուն գաղաղութեան և քննութեան հիման վերայ յայտնում ենք, որ այս միաբնութիւնը վտանգաւոր է հաւատոյ վերաբերմամբ, որ նախանգարում է եկեղեցու խաղաղութիւնը, որ նա միաբնական կեանքը ոչնչացնում, կարծ այդ ընկերութիւնը աւելի կործանման է ծառայում, քան շինութեան, Հազիւ 15 տարի էր անցել ձիզույթների կարգի հաստատութիւնից և արդէն այսպիսի դժգոհութիւն էր յառաջ բերել եկեղեցու գիտութեամբ օժտուած բարեկամների մէջ:

Այս տրտունջներն ու դժգոհութիւնները ազդելի մէջ այնքան զօրացան, որ Կղեմէս ԺԳ. պապըն 1773 թ. օգոստոսի 16-ին սաղապուած էր լուծել այդ կարգը Dominus ac Redemptor noster թղթով, Պապը նախ պարզում է, որ իւր պարագն է եկեղեցու խաղաղութիւնը պահպանել, ոչնչացնել այն ամենը, որ մինչև իսկ խիստ փոքր չափով վրնասկար կարող է լինել քրիստոնէութեան, Յիսուսեան կարգն այլ ևս այնպիսի մեծ արգիւնք և օգուտ չէ տալիս, որն համար հիմնուած է և այնքան արտօնութիւններ է ստացել նախկին պապերից, Սրովհետև զեռ նոր էր հիմնուել Յիսուսեան միաբնութիւնը, գրում է Կղեմէս իւր թղթում, որ երկպառակութեան և նախանձի սերմեր ցանեց ոչ միայն իւր անդամների մէջ, այլ և միւս միաբնութիւնների և աշխարհիկ քահանաների, համալսարանների, նոյն իսկ այն

վերաբերութեամբ, որ ընդունում էին նրանց, Ամբողջ աշխարհը խռովութեան մէջ է նրանց պատճառով, Հատ անդամներ ազդափառ հաւատոյ և բարի սովորութիւնների դէմ վտանգաւոր վարդապետութիւններ են տարածել (ձիզույթական բարոյականութիւններով), մանաւանդ նոցա ազահութիւնը դէպի երկրաւոր բարիքը հակառակ է հոգեւոր կոչման: Մեր նախորդների գործ դրած բոլոր միջոցներն ի դուր անցան ոչնչացնելու այն սկզբունքներն, որ իրաւամբ Ս. Աթոռը գայթակղեցուցիչ և բարոյականութեան դէմ էր համարում: Ուստի և աչքի առաջ ունենալով, որ քանի Յիսուսեան կարգը գոյութիւն ունի, եկեղեցին ճշմարիտ և տեական խաղաղութիւն չի ունենալու, այսու լուծում ենք այն մինչև յաւիտեան, ոչնչացնելով նորա արտօնութիւնները և կապը Աթոռի հետ:


Չնայելով ex cathedra հրատարակուած այս լուծման և եւրոպական պետութիւնների մէջ դուրս հետ կապուած հալածանքներին, ձիզույթները պահպանեցին իրենց գոյութիւնը և մեծ ազդեցութիւն ձեռք բերին հէնց Կղեմէսի յաջորդի Պիոս Զ.-ի ժամանակ:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ.

Վերջին հինգ տարին Գերմանիայում 2860000 օրինակ Ս. Գիրք է տարածուել, հէնց միայն 1898թ. 954,482 օրինակ, Այս նպատակով Գերմանիայում գործում են այլ և այլ բիրլիական ընկերութիւններ, բայց ամենից ազդեցիկը բուն գերմանական ընկերութիւնն է: Վերջին 90 տարուոյ ընթացքում բիրլիական բոլոր ընկերութիւնները միասին 29 միլիոն Ս. Գիրք են տարածել, Բողոքական ընդհանուր բիրլիական ընկերութիւնների մէջ ամենից նշանաւորը բրիտանական է, որ 1898 թուին 5,047,792 օրինակ Ս. Գիրք է տարածել ամբողջ աշխարհում, եկամուտ է ունեցել 4 1/2 միլ. մարկ, օրից 2 1/2 միլիոնը նուէր զանազան անձանց կողմից, Ընկերութիւնը իւր գոյութեան օրից մինչև այժմ 165 միլ. Ս. Գիրք է տարածել, ԺԺ. գարում բոլոր ընկերութիւնների տաքածած Ս. Գրքի թիւը հասնում է 200 միլիոնի:

— Բիրլիկի ուսանողների թիւը, համալսարանի ուսանողների թիւը 6673 է, օրոնցից 366 աստուածաբանութեան, 2359 իրաւաբանութեան, 1312 բժշկութեան և 2636 փիլիսոփայութեան ձեւորերն են պատկանում, Բացի համալսարանից, միւս բարձրագոյն դպրոցներում ուսանում են 5466 հոգի, որ իրաւունք ունեն համալսարանում ևս լսել, եթէ կամենան, այսպիսով Բիրլիկի բոլոր ուսանողների թիւը 12,139 է, ուսանողութիւնների թիւը 439:

Վերջին տարիները Գերմանիայում սովորու-



թիւն է գարձել համալսարաններում կամ յմասնաւոր կերպով միտնարութեան մասին դասընթացքեր կարգել: Այդպիսի դասախօսութիւնների մասնակցում են պատեօրներ, ուսուցիչներ, աստուածաբանութեան կանգիտաւաններ (աւարած) և ուսանողներ և ընդհանրապէս այնպիսի մարդիկ, որոնց սրտին կամ մօտ է քրիստոնէութեան տարածման դօրծը կամ ցանկութիւն ունին՝ գործնականապէս ծառայել այդ նպատակին: Այդպիսի մի դասընթացք որոշուած է բանալ եկող մայիսին Լայպցիգին մօտ եղած Լաուզից քաղաքում: Լայպցիգի միտնարական ընկերութիւնը խոստանում է բնակարանի և կերակրի կողմից ամեն տեսակ դիւրութիւններ տալ դասընթացքին մասնակցող անձանց:

— Անցեալ տարուայ ընթացքում Վիեննայի բողոքական համայնքը ստուարացել է 1107 նորագարձներով, որոնցից 937 կաթոլիկ են եղել և 170 հոգի հրէայ: Յամենայն դէպս Աւստրիայում սկսուած հակակաթոլիկական շարժումը հետզհետէ կարծես թուլանում է:

— Ներկայ թուականից՝ Վիեննայի բողոքական աստուածաբանական փակուղւտը մի մի մեծ դիւրութիւն պիտի ստանայ աստուածաբաններ պատրաստելու գործի նկատմամբ: Վաղուց արծարծուած էր աստուածաբանութեան ուսանողների համար առանձին բնակարան ունենալու միտքը: Բուն Գերմանիայում համալսարանական քաղաքներում շատ կան այնպիսի հաստատութիւններ, որոնց նպատակն է աստուածաբանութեան ուսանողներին նիւթապէս և բարոյապէս նպաստելու հիմնաւոր կրթութիւն և գիտնական պատրաստութիւն ձեռք բերելու համար: Այդ հաստատութիւնները յայտնի են զանազան Convict, Theologenheim անուններով, ուր աստուածաբանութեան ուսանողները ձրի բնակարան և վառելիք են ստանում, մի տեսակ համայնական ուսանողական կեանք են վարում այն ուսուցչապետի առաջնորդութեամբ, որին յանձնուած է հաստատութիւնը: Ուսանողներն իրենց շաբաթական գիտական ժողովներն ունին ուսուցչապետի նախագահութեամբ, կարգով շաբաթընթացքի են կարգում և քննադատութեան ենթարկում: Կամ քարոզներ են խօսում և այսպիսով գործնականապէս վարժուած ապագայ քահանայական պաշտօնի համար: Այդպիսի հաստատութիւններն իրենց մասնաւոր մասնադարաններն ունին, որից օգտուել կարող են ուսանողները: Վան հաստատութիւններ ևս, ուր վերջի շնորհների հետ նաև համայնական ծառ ունին բողոքական ձրի կամ շնչին վճարով:

Ահա այսպիսի մի հաստատութիւն է հիմնուած այս տարուանից բողոքական աստուածաբանութեան փակուղւտի հսկողութեան ներքոյ՝ արժանաւոր հոգեւորականներ պատրաստելու համար: Հակակաթոլիկ շարժմամբ վերջին տարիներս բողոք-

քականութիւնն սկսել է զօրանալ Աւստրիայում և մեծ կարիք է զգացւում պատրաստուած պատեօրների, նոր հաստատութիւնն անշուշտ շատ նպաստաւոր կլինի այս կարիքը լրացնելու համար:

Բողոքական և կաթոլիկ եկեղեցիների օրինակին հետևում է այդպիսի բարեկամական ձեռնարկութիւնների մէջ նաև Ռուսաց եկեղեցին, սեմինարիականներին օգնող ընկերութիւններ և «բնծայարաններ» հիմնելով: «Բնծայարան» կարելի է կոչել այն հաստատութիւնները, ուր կաթոլիկ, օրթոդոքս և բողոքական եկեղեցիների համար սպասուողներ են պատրաստում գործնականապէս վարժեցնելով մասնակցողներին եկեղեցական պաշտամունքի և քարոզութեան մէջ: Այդպիսի «բնծայարանների» սաներ ընդունում են միջնակարգ և բարձրագոյն հոգևոր դպրոցներն աւարտած երիտասարդներէջ:

Մենք ևս պարտաւոր ենք օրինակ վերցնելու մեր հանգամանքների համեմատ. առանց կոչման պատրաստ սպասաւորութեան եկեղեցին անզօր կլինի իւր գաստիարակական նպատակին ծառայելու և Աւետարանը մեռած տառ կ'մնայ մեր ժողովրդի համար:



## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ.

Ա.

Գ.

ԻՏՈՒԹԻՒՆ և ԵԿԵՂԵՑԻ. վերնադրով մի յօդուածի մէջ «Արարատ»-ի ընթերցողներին փարձել էինք պարզել այն խնդիրը, որ տարաբաղաւոր դեռ շատերի համար վիճելի է, թէ գիտութիւնը, յատկապէս եկեղեցական կամ աստուածաբանական գիտութիւնը, ինչպէս ընդհանուր, այնպէս էլ մեր եկեղեցւոյ դարդացման, բարոյական հեղինակութեան բարձրացման անհրաժեշտ պայմաններից մէկն է: Տգիտութիւնը, մտքերի շփոթութիւնը, բրիտանեական լուստուր դաղափարների բացակայութիւնը մեր եկեղեցւոյ համար նոյնչափ

